

## Հավելված 5

### ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ ԵՎԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ

2015 թվականի դեկտեմբերի 24-ին «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակի և «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի միջև կնքված N4/15-CIF դրամաշնորհային պայմանագրի շրջանակներում վճարովի ծառայությունների

մատուցման աշխատանքների նկարագիր

**Ծրագրի անվանումը.** «Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» դրամաշնորհային ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր)

**Ծրագրի հիմնական նպատակը** «Բիզնեսի կառավարում» («Գործարար վարչարարություն (կառավարում)»)<sup>1</sup> մագիստրոսական կրթական ծրագրի կազմակերպումն է հեռավար ձևաչափով, որի արդյունքում կտրվեն ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի համատեղ դիպլոմներ:

#### ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ (1խորհրդատու ՀՀՊԿԱ, 1խորհրդատու ԳԱԱ)

«Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվում է անցկացնել մեթոդական վերապատրաստում այն պրոֆեսորադասախոսական կազմի համար, որոնք մրցույթի արդյունքում ընտրվելու են հեռավար դասընթացների կառուցման և դասավանդման համար Moodle հեռավար ուսուցման հարթակում:

Վերապատրաստումն անցկացնելու համար նախատեսվում է ներգրավել երկու վերապատրաստող՝ ՀՀ ՊԿԱ պրոֆեսորադասախոսական կազմի և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական կազմի հեռավար դասընթացների կառուցման ուղղությամբ վերապատրաստում անցկացնելու նպատակով, որոնցից մեկը վերապատրաստումն կանցկանցի ՀՀ ՊԿԱ-ում, իսկ մյուսը՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում:

<sup>1</sup> 041301.04.7 Գործարար վարչարարություն (կառավարում)՝ համաձայն 2015 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերը հաստատելու մասին» N 647-Ա/Ք հրամանի:

Սույն ծրագրի կոնսորցիումի անդամներ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն և ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների (ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ) ինստիտուտը իրենց ոչ-գումարային ներդրումների շրջանակներում անցկացնելու են վերապատրաստումներ հետևյալ ուղղությամբ՝

**ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ՝**

- Տեսակոնֆերանսների անցկացում և արխիվացում /BigBlueButton/
- Տեսաձայնագրությունների պատրաստում /Camstudio/
- Բաց մատչելիության առցանց ռեսուրսներ եվ հեղինակային իրավունք
- Որակի ապահովումը հեռավար կրթության ոլորտում

*Լսարանային - 4 ժամ*

*Առցանց - 2 ժամ*

*Վերապատրաստումներն անցկացվելու են 4-րդ փուլում:*

**ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ՝**

ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը մատուցում է այս ծառայությունները միայն ASNET-AM ցանցի անդամ կազմակերպությունների համար, սույն ծրագրի շրջանակներում անվճար տրամադրում է սույն ծառայությունները և անցկացնում վերապատրաստում՝

- Ինչպես օգտվել WebRTC վեբ կոնֆերանս համակարգից՝ handipum.asnet.am, որի միջոցով կարելի է կազմակերպել առցանց հանդիպումներ և քննարկումներ:
- Ինչպես օգտվել ASNET-AM ցանցի գիտական հրապարակումների համակարգից (pubs.asnet.am), մասնավորապես՝ անհատական մուտքի և գրապահարանի ստեղծում, սեփական հրատարակությունների վերբեռնում, որոնում հայկական գիտական շտեմարաններում:
- Ինչպես օգտվել ամպային պահոցների տրամադրման ծառայությունից (drive.asnet.am), որը օգտագործողներին կարող է տրամադրել մինչև 50GB պարունակության պահպանում. այս բազմաֆունկցիոնալ ծառայությունը կրճատում է ցանցում ֆայլերի վերբեռնելու և ներբեռնելու ժամանակը:

*Լսարանային - 2 ժամ*

*Առցանց - 1 ժամ*

*Վերապատրաստումներն անցկացվելու են 4-րդ փուլում:*

Սույն ծրագրի շրջանակներում Մուղլ հեռավար ուսուցման հարթակում հեռավար դասընթացների կառուցման և վարման համար անհրաժեշտ է անցկացնել մեթոդական վերապատրաստումներ, այդ իսկ պատճառով հայտարարվում է խորհրդատու – վերապատրաստողների մրցույթ:

**խորհրդատու-վերապատրաստողներից** ակնկալվում է Ծրագրի պատասխանատուի ուղղակի վերահսկողության ներքո իրականացնել վերապատրաստում հետևյալ ուսումնական ծրագրով:

Քանի որ երկու բուհերում էլ վերապատրաստումն իրականացվելու է նույն ծրագրով, ապա խորհրդատու-վերապատրաստողները համատեղ պետք է մշակեն վերապատրաստման ուսումնական ծրագիր և ներկայացնեն Ծրագրի ղեկավարի հաստատմանը, որից հետո կսկսեն այն իրականացնել: Ծրագիրը պետք է կազմվի հետևյալ ձևաչափով(բովանդակությամբ):

## ԾՐԱԳԻՐ

### 1-ին փուլ

#### Հեռավար ուսուցում -Moodle

- Հեռավար ուսուցման տեխնոլոգիաներ
- Հեռավար ուսուցման մանկավարժությունը
- Սովորողի մոտիվացիան հեռավար ուսուցման մեջ
- Դասավանդողի դերը հեռավար ուսուցման մեջ

#### Հեռավար ուսուցման կազմակերպումը- Moodle

- Դասավանդման առցանց տեխնոլոգիաներ
- Համաժամանակյա և տարաժամանակյա ուսուցում
- Առցանց հաղորդակցման տեխնոլոգիաներ
- Ուսուցման կառավարման համակարգի առանձնահատկությունները/Մուդլ հեռավար ուսուցման հարթակում/

### 2-րդ փուլ

#### Հեռավար դասընթացի պատրաստման տեխնոլոգիաներ – Moodle

- Հեռավար դասընթացի ստեղծման առանձնահատկությունները /Մուդլ հեռավար ուսուցման հարթակում/
- Դասընթացի միջավայրի ձևավորումը և կարգաբերումները
- Դասընթացի վերջնարդյունքի ձևավորումը
- Պաշարների տեսակները

### 3-րդ փուլ

#### Հանձնարարություններ և առաջադրանքներ

- Առցանց առաջադրանքներ
- Համագործակցային աշխատանք

- Նախագծային աշխատանք
- Հաղորդակման տեսակները /ցանցից դուրս քննարկումներ և առցանց զրույց/
- Առցանց դասախոսություն և սեմինար

#### 4-րդ փուլ

#### Առցանց հաղորդակցում

- Առցանց հաղորդակցման կանոններ
- Webinar, VideoConferencing

#### Գիտելիքի ստուգում և գնահատում

- Գնահատման և ինքնագնահատման կազմակերպումը
- Խմբային գնահատում
- Թեստային գնահատում
- Հարցումների իրականացումը
- Մասնակիցների ուսուցման վերաբերյալ ամփոփ հաշվետվության արտահանում Մուլի համակարգի միջոցով:

\*Դասընթացի տևողությունը

*Լսարանային -32 ժամ (1փուլում - 8ժամ)*

*Առցանց -32 ժամ (1փուլում - 8ժամ)*

*Ընդամենը 64ժամ (1 ժամի արժեքը մոտավորապես կկազմի 6250ՀՀ դրամ,որը համարժեք է ՀՀ ՊԿԱ-ում նույն առարկան առկա ուսուցման համակարգում դասավանդող դասախոսի ժամավճարին )*

\*Խմբերի քանակը

*1խումբ ՀՀՊԿԱ -13 դասախոս («Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում անհատ խորհրդատուներ, որոնք պետք է մշակեն հեռավար դասընթացները):*

*1խումբ ԳԱԱ ԳԿՄԿ - («Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում անհատ խորհրդատուներ, որոնք պետք է մշակեն հեռավար դասընթացները):*

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հ/Հ	Խորհրդատու	Վերջնարոյունք
1	<p>ՀՀՊԿԱ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման խորհրդատու</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Իր կողմից մշակված վերապատրաստման ծրագրի 1-ին և 3-րդ փուլերի թեմաների վերաբերյալ հաշվետվություն և մշակված նյութեր:</li> <li>• Իրականացված վերապատրաստման վերաբերյալ հաշվետվություն, որը կներառի               <ul style="list-style-type: none"> <li>✓ Վերապատրաստված անձանց թիվ</li> <li>✓ Վերապատրաստման տևողություն</li> <li>✓ Վերապատրաստվող դասախոսների կողմից իրական/ռեալ պատրաստած փորձնական դասընթացների քանակ</li> <li>✓ Տվյալ փուլում մասնակիցներին ներկայացված թեմաները</li> <li>✓ Ավարտական փուլում դասախոսի գնահատում</li> </ul> </li> </ul>
2	<p>ԳԱԱԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման խորհրդատու</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Իր կողմից մշակված վերապատրաստման ծրագրի 2-րդ և 4րդ փուլերի թեմաների վերաբերյալ հաշվետվություն և մշակված նյութեր:</li> <li>• Իրականացված վերապատրաստման վերաբերյալ հաշվետվություն, որը կներառի               <ul style="list-style-type: none"> <li>✓ Վերապատրաստված անձանց թիվ</li> <li>✓ Վերապատրաստման տևողություն</li> <li>✓ Վերապատրաստվող դասախոսների կողմից իրական/ռեալ պատրաստած փորձնական դասընթացների քանակ</li> <li>✓ Տվյալ փուլում մասնակիցներին ներկայացված թեմաները                   <ul style="list-style-type: none"> <li>✓ Ավարտական փուլում դասախոսի գնահատում</li> </ul> </li> </ul> </li> </ul>